քում կ'ունենայ ամէն անգամ որ կուշտուկուռ ելակ կ'ուտէ: Կոտնմն ու ծնեբեկն (asperge) ալ այս դասին կը պատկանին։

6. — *Ինքնաբեր սերմնահոսութիւնը կը շփոթեն թարախի հետ։ Նաև սեռային գրգռումի պատճառով, հեղուկ մը դուրս կ'հլլէ միզանցքին բացուածքէն, որ միզանցքի բորբոքումի կամ ջերմամիզութեան հետ ոչ մէկ առնչութիւն ունի։*

7. — *Երախաները յաճախ կը խաղան իրենց սեռային գործարաններուն հետ և քարի կտոր, կուտ, եւայլն կը հրեն միզանցքէն ներս, որ կը բորբոքի և թարախ կ'արտադրէ։*

8. — *Միզափամփուշտին ու միզանցքին մէջ գոյացած քարերն ու աւազները։*

9. — *Մէզին չափէն աւելի թթուութիւնը։*

10. — *Որոշ դեղօրայք, ինչպէս կոլը (cantharide)։*

Ամփոփում եւ եզրակացութիւն. — *Բուն ջերմամիզութիւնը կոնոքոք կոչուած միքրոպին ազդեցութեան տակ յառաջացած միզանցքի բորբոքում և թարախհոսում է. բայց ամէն թարախհոսում կամ միզանցքի բորբոքում ջերմամիզութիւն չէ, թէև այդպիսի պարագաներ, բաղդատաբար կոնոքոքի ազդեցութեամբ յառաջացած բորբոքումները, շատ հազուադէպ են։* *Բժ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՍԵԱՆ*

ՀԱՆՐԱՏՈՒՆՆԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ֆրանսայի մէջ կը տեսնուի զօրեղ հոսանք մը հանրատուններու փակումին պաշտպան: Եւրոպայի մէջ տակաւին երեք երկիրներ, Ֆրանսա, Սպանիա եւ Ցունաստան, պաշտօնապէս արտօնած են բոզանոցներու բացումը։ Սակայն Ֆրանսական քանի մը քաղաքներ (Պէգիէ, Ֆոլմար, Փօ, Ռուպէ) փակած են իրենց հանրատունները: Վերջին որոշումը տուած էր երեք տարի առաջ Սթրազպուրկ, որ 170.000 բնակչութիւն եւ 7.000 զինուոր ունի: Ստորին Հռենոսի Առողջապահութեան Նահանգային Խորհուրդը այս առթիւ կը հրատարակէ հետեւեալ զեկոյցը.

«Առողջապահական Խորհուրդը, 5 փետր. 1929ի նիստին մէջ, վերահասու եղաւ այն տեղեկագրին, որ կը վերաբերի Սթրազպուրկի մէջ վեներական հիւանդութեանց զարգացման։ եւ տեսաւ որ, 1 փետր. 1926էն ի վեր, երբ փակուեցան հանրատունները, քաղաքին մէջ վեներական հիւանդութիւնները նուազած են կարեւոր համեմատութեամբ մը: Մինչ, ըստ քաղաքային հիւանդանոցին բժշկական քննութիւններուն, նախապէս ամիսը միջին հաշուով սիֆիլիմէ վարակուած 16 հոգի կը ներկայանային, 1928ին այդ թիւը իջած է մինչեւ 8ի: Սթրազպուրկի զօրանոցին մէջ նախապէս ամիսը 14 հոգի սիֆիլիսով կը վարակուէին, մինչդեռ 1928ին՝ 1էն ալ պակաս։ Առողջապահական Խորհուրդը, չափազանց գնահատելով այս արդիւնքը, որոշեց խնդրել մամուլէն, որպէսզի ժողովուրդին տեղեկացնէ եւ *սրբագրուի այն սխալ եւ վտանգաւոր կարծիքը թէ հանրատունները առողջապահական տեսակէտով կարեւոր ապահովութիւն մը կը ներկայացնեն*»։